

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՄԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
29.10.2012թ.**

գ. Մայակովսկի

Ի կատարումը ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի հունվարի 30-ի N 11-Ա հրամանով հաստատված վարչական հսկողություն իրականացնելու 2012 թվականի աշխատանքային ծրագրի, ՀՀ Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 22-ի թիվ 10-Ա կարգադրության և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2012 թվականի հոկտեմբերի 22-ի N 242-Ա հրամանի՝ ս. թ. հոկտեմբերի 23-ից 26-ը ներառյալ Կոտայքի մարզի Մայակովսկու գյուղապետարանում իրականացվեց վարչական հսկողություն: Վարչական հսկողությունը իրականացվել է ՀՀ փոխվարչապետի 2012 թվականի հունվարի 30-ի N 02-Ն հրամանով հաստատված՝ ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության իրականացման և կադրային գործի վարման, մեթոդական ուղեցույցի համաձայն: Ուսումնասիրությունները իրականացվել են հետևյալ կազմով՝ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյան (աշխատանքային խմբի ղեկավար), նույն վարչության՝ ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Ռ. Թումոյան, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Ս. Բաղդասարյան, իրավաբանական բաժնի պետ Ա. Հարությունյան, հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Ե. Ավետիսյան, քաղաքաշինության վարչության՝ ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ Ա. Վիրաբյան:

Աշխատանքներին մասնակցել են Մայակովսկի համայնքի ղեկավար Վ. Բարսեղյանը, աշխատակազմի քարտուղար Վ. Փայտյանը:

Վարչական հսկողությունը ընդգրկել է 2009 թվականի հոկտեմբերից մինչև 2012թ. հոկտեմբերը ընկած ժամանակահատվածը:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Իրավական հսկողության իրականացում՝ համայնքի ավագանու ներքոհիշյալ լիազորությունների նկատմամբ

1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իր կանոնակարգի ընդունում.

- Համայնքի ավագանին, սահմանված կարգով, իր կանոնակարգն ընդունել է 25.11.2008թ. թիվ 1/1 որոշմամբ (կանոնակարգում կատարվել է լրացում՝ 22.10.2009թ. թիվ 22 որոշմամբ՝ սահմանվել են ավագանու հերթական նիստերի գումարման օրեր):

2) համայնքի զարգացման ծրագրի հաստատում.

- Համայնքի ավագանին համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը հաստատել է 19.03.2009թ. թիվ 4/1 որոշմամբ: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք հոդված 53, մաս առաջին:/

3) համայնքի բյուջեի, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունների եւ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատում.

-* Համայնքում ֆինանսական հսկողությունը ներառել է 2009-2011 թթ և 2012թ-ի հաշվետու ժամանակաշրջանը: Համայնքի բյուջեի նախագիծը ավագանու հաստատմանը ներկայացվել է << Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքով նախատեսված ժամկետներում:

Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները և եռամսյակային հաղորդումները ավագանու քննարկանք և հաստատմանը ներկայացվել են <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքով նախատեսված ժամկետներում:

4) համայնքի բյուջեի կատարման վերահսկում և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործում.

-* Համայնքում վարչական հսկողություն իրականացված ժամանակահատվածում համայնքի ստացած վարկերի ու այլ ֆինանսական միջոցներ չեն ներգրավվել:

5) կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների որոշում՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ.

- Համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգի մասին որոշումներ չեն ընդունվել, համայնքի ղեկավարը այդպիսի որոշման նախագծեր չի ներկայացրել: Չի կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, 1-ին մասի, 5-րդ կետի պահանջը:

6) համայնքի ավագանու որոշմամբ եւ սահմանած պայմաններով համայնքի սեփականություն համարվող գույքի օտարում կամ օգտագործման տրամադրում.

*** Ստուգման ժամանակահատվածում Մայակովսկու համայնքի ավագանու կողմից կայացվել է 5/ հինգ/ որոշում , համայնքային սեփականության հողամասերը օտարելու և վարձակալությամբ հատկացնելու վերաբերյալ:

7) համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացում.

+Համայնքի ղեկավարի լիազորությունների նկատմամբ վերահսկողություն է իրականացվում բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումների միջոցով: Ուսումնասիրվող ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել է թվով 12 հաղորդում, որը ավագանու կողմից ընդունվել է ի գիտություն:

8) համայնքի ղեկավարի՝ օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկում.

+ Համայնքի ղեկավարի օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումներ դատական կարգով չի վիճարկվել՝ դրա անհրաժեշտությունը չլինելու պատճառով:

9) համայնքի ղեկավարի վարձատրության չափի որոշում.

- Ավագանու առանձին որոշումով համայնքի ղեկավարի վարձատրության չափ չի սահմանվել, չի կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջը (աշխատակազմի հաստիքացուցակով հաստատվել է 180000 դրամ, որը համապատասխանում է օրենքով սահմանված չափին, համայնքի քնակչության թիվը կազմում է մոտ 2370 մարդ, ՏԻՄ հ. 27):

10) համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային եւ ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին օրենքով սահմանված կարգով որոշման կայացում .

Ստուգվող ժամանակահատվածում՝ համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշումներ չեն կայացվել:

11) համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին իր որոշմամբ համաձայնություն տալը.

- Ստուգվող ժամանակահատվածում բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին ավագանու որոշմամբ՝ համաձայնություն տալու մասին որոշումներ չեն կայացվել:

12) առևտրի, հասարակական սննդի եւ սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնների՝ օրենքով սահմանված կարգով հաստատում.

-Առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները՝ օրենքով սահմանված կարգով, հաստատվել են ավագանու 06.09.2010թ. թիվ 28-Ն որոշմամբ:

13) տեղական հարկերի, տուրքերի եւ վճարների տեսակների ու դրույքաչափերի օրենքով սահմանված դեպքերում սահմանում.

-*Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նկատմամբ տարված արդյունքում պարզվեց, որ տեղական տուրքերը սահմանվել են <Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափերին համապատասխան: Համայնքի ավագանու կողմից սահմանվել են թվով 5 տեղական վճարներ:

14) համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանում.

-* Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նկատմամբ տարված արդյունքում պարզվեց, որ տեղական տուրքերը սահմանվել են <Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափերին համապատասխան: Համայնքի ավագանու կողմից սահմանվել են հետևյալ տեղական վճարները.

1. Համայնքի տարածքում շինարարության և շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ ՏԻՄ-ի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5.0 հազար դրամ:

2. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար 1.0 հազար դրամ:

3. Համայնքի տնօրինության օգտագործման տակ գտնվող հողերը հատուցելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար համայնքի մատուցման ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 4.0 հազար դրամ:

4. ՏԻՄ-երի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝

- Կենցաղային աղբի համար հաշվառում ունեցող և/կամ/ բնակվող յուրաքանչյուր շնչի համար ամսական 100 դրամ
- Ոչ կենցաղային աղբի համար ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար ամսական 2000 դրամ

Համայնքի վարչական տարածքում շինարարական խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել 500 դրամ:

15) համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու եւ օտարելու մասին որոշման կայացում, դրանց վարձավճարների եւ օտարման գների չափերի եւ պայմանների, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գների հաստատում.

*** Համայնքի սեփականության հողամասերի օտարման և վարձակալության վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված կարգով ավագանու ներկայացվել է 5 առաջարկություն, որը ընդունվել է ավագանու կողմից և կայացվել է որոշում:

16) համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային եւ այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման եւ վերանվանման վերաբերյալ որոշման կայացում.

-Համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ ստուգվող ժամանակահատվածում որոշումներ չեն կայացվել:

17) գյուղապետարանի աշխատակազմի եւ բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակի եւ պաշտոնային դրույքաչափերի հաստատում.

Համայնքային ծառայության պաշտոնների մասով գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի եւ (կամ) հաստիքացուցակի հաստատում, ինչպես նաեւ փոփոխելու եւ (կամ) լրացնելու հարցում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ եւ (կամ) լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինն դիմելու մասին որոշման կայացում:

-Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են ավագանու 12.01.2010թ. N 06, 02.04.2010թ. N 14 /փոփոխ./, 12.01.2011թ. N 05, 08.08.2011թ. N 30 /փոփոխ./, 12.01.2012թ. N 05 որոշումներով:

- Ստուգվող ժամանակահատվածում ավագանին 02.04.2010թ. N 14, 08.08.2011թ. N 30 որոշումներով՝ Մայակովսկու գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում կատարել է համապատասխան փոփոխություններ ու լրացումներ և սահմանված կարգով /մարզպետի 16.04.2010թ. N 01/15.1/1092-10 և 26.09.2011թ. N 01/15.1/3578-11 գրություններով/ առաջարկություններով դիմել է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինն՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը՝ Մայակովսկու գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում /2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանի հավելված N 36-ում/ համապատասխան փոփոխությունները և լրացումները հաստատելու համար, որոնք

հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 01.06.2010թ. N 75-Ա և 06.10.2011թ. N 122-Ա հրամաններով:

18) բնակավայրի քաղաքաշինական կանոնադրության հաստատում.

****ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքում բացակայում է քաղաքաշինական կանոնադրությունը**

19) համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատում.

-* Գույքագրման փաստաթղթերի նկատմամբ իրականացված հսկողության արդյունքում պարզվեց, որ գույքագրվել են միայն հիմնական միջոցները, ինչը հակասում է <Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրման կարգը հաստատելու մասին> ՀՀ ֆինանսների նախարարի 2000թ-ի N 102-Ն հրամանին:

2. Իրավական և (կամ) մասնագիտական հսկողություն իրականացվում է համայնքի ղեկավարի՝ ներքոհիշյալ բնագավառներում, իրականացրած լիազորությունների նկատմամբ

2.1 Ֆինանսների բնագավառ

1.Համայնքի բյուջեի նախագծի, դրանում առաջարկվող փոփոխությունների կազմում համայնքի ավագանու հաստատման ներկայացում, բյուջեի կատարման ապահովում և բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյա հաղորդումների և տարեկան հաշվետվության ներկայացում համայնքի ավագանուն.

Համայնքում ֆինանսական հսկողությունը ներառել է 2009-2011 թթ և 2012թ-ի հաշվետու ժամանակաշրջանը: Համայնքի բյուջեի նախագծի կազմումը իրականացվել է առանց համայնքի ղեկավարի բյուջետային գործընթացը սկսելու մասին որոշման, որի համար չկան համապատասխան բյուջետային կարգադրիչների կողմից ներկայացվաց բյուջետային ֆինանսավորման հայտեր, որոնք հիմք պետք է հանդիսանան բյուջեի ծախսային հատվածներում գումարներ հաստատելու համար, ինչպես նաև հիմնավորումներ նոր ծրագրերի համար: Համայնքի բյուջեի նախագիծը ավագանու հաստատմանը ներկայացվել է << Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքով նախատեսված ժամկետներում:

Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները և եռամսյակային հաղորդումները ավագանու քննարկանք և հաստատմանը ներկայացվել են <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքով նախատեսված ժամկետներում, սակայն առանց աուդիտորական եզրակացության: Համայնքի ֆինանսական գործունեության և համայնքի բյուջեի տարեկան կատարման նկատմամբ աուդիտ իրականացվել է 2010թ-ին, սակայն աուդիտի եզրակացությունը համայնքի ավագանուն չի ներկայացվել: Հարկ է նշել, որ համայնքի աշխատակազմում չի գործում ներքին հսկողության համակարգ: Այնուամենայնիվ հաշվետվությունները հաստատվել են ավագանու կողմից, իսկ հաղորդումները ընդունվել են ի գիտություն:

2. Տեղական հարկերի, տուրքերի եւ վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերի ներկայացում ավագանու հաստատմանը:

Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նկատմամբ տարված արդյունքում պարզվեց, որ տեղական տուրքերը սահմանվել են <Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափերին համապատասխան: Համայնքի ավագանու կողմից սահմանվել են թվով 5 տեղական վճարներ:

3. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային եւ պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձման ու վերահսկման՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպում.

Աղբահանության գումարների գանձման ուղղությամբ տարված հսկողության արդյունքում պարզվեց, որ աղբահանության գծով համայնքի բնակիչների հետ ծառայությունների մատուցման պայմանագրեր չեն կնքվել, ինչպես նաև գանձված գումարները հաշվապահին տրվում են առանց հանձման-ընդունման ամփոփագրերի, որը պետք է հաստատված լինի համայնքի ղեկավարի կողմից: Նախորդ տարիների ապառքի նկատմամբ հաշվառում չի տարվում, սակայն վերլուծության արդյունքում պարզվեց, որ 2010թ-ին աղբահանության վճարի գծով ապառքը կազմում է 150.9 հազար դրամ, 2011թ-ին՝ 206.4 հազար դրամ/ընդհանուր 357.3 հազար դրամ/, որը համայնքի գույքագրման փաստաթղթերում չի արտացոլվել և համայնքի ավագանու կողմից չի ճանաչվել որպես դեբիտարական պարտք:

Վարձակալական վարձավճարների նկատմամբ տարված հսկողության արդյունքում պարզվեց, համաձայն հողային հաշվեկշռի համայնքի վարչական տարածքում վարձակալությամբ տրվել է 10.40հա՝ ընդհանուր 483.18հա, որից 242,23 պետական սեփականության հողեր: 2010թ-ին սխալ պլանավորման արդյունքում բարձր կատարողական է արձանագրվել հողի վարձակալական վարձավճարների գծով, որը տարեկան պլանավորվել է 50.0 հազար դրամ, այն դեպքում, երբ 2010թ-ին վարձակալական վարձավճարների գծով պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 810.0 հազար դրամ/14.08.08թ-ին կնքված/, իսկ փաստացի կատարողականը կազմել է 1338.7 հազար դրամ, որից 538,7 հազար դրամը նախորդ տարիների ապառք:

Տեղական տուրքերի և վճարների թույլտվության և գումաների գանձման ուղղությամբ տարված հսկողության արդյունքում պարզվեց, որ, 2010, 2011թ-ին համայնքի ավագանու որոշմամբ օդու և ծխախոտի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվել է 10,0 հազարական դրամ, սակայն թույլտվության համար գանձումը կազմել է 5.0 հազարական դրամ, այսինքն գանձվել է համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափի 50%-ի չափով, ինչը <Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքի համաձայն ենթակա է պարտադիր գանձման:

2010թ-ին օդու և ծխախոտի վաճառքի թույլտվության գծով համայնքի ղեկավարի որոշմամբ տրվել է թվով 6 թույլտվություն՝ միաժամանակ հոկտեմբեր ամսին, այսինքն 4-րդ եռամսյակի գանձումը թերակատարվել է 40.0 հազար դրամով, որը ձևակերպվել է որպես ապառք և գանձվել է 2011թ-ին: 2011թ-ին տրվել է 6 թույլտվություն տրվել է ապրիլ ամսին՝ 2-րդ եռամսյակին, իսկ առաջին եռամսյակի գործունեության դադարեցման վերաբերյալ հաշվետվություններ չներկայացվեց: 2012թ-ին 6 թույլտվություն՝ ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի գծով և մեկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների աշխատանքի թույլտվություն ժամը 24-ից հետո:

2.2 Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

1)Կառավարության սահմանած կարգով քաղաքային եւ գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթերի կազմում:

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի հողերի օգտագործման և գոտիաորման սխեման հաստատվել է ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

2)Համայնքի քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարում, համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմում և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում.

Քաղաքաշինական կադաստր համայնքը չի վարում, բացակայում է քաղաքաշինական կանոնադրությունը:

3)Սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին իրազեկում, կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրում, ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցում.

Համայնքի ղեկավարի կողմից ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը և նախագծերի քննարկումը բացակայում է, խախտելով ՀՀ կառավարության 28.10.1998թ. թիվ660 որոշման պահանջները:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին համաձայնեցվել է 2; 2010թ-ին 11; 2011թ-ին 7 և 2012թ-ին 7 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր որոնց տրման համար հիմք հանդիսացող հայտը 2009թ-ի համար բացակայում են:

4)Շինարարության (քանդման) թույլտվության սահմանված կարգով տրամադրում, շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար օրենքով սահմանված կարգով միջոցառումների ձեռնարկում.

Համայնքի ղեկավարի կողմից տրվել է 2009թ-ին 2; 2010թ-ին 11; 2011թ-ին 7 և 2012թ-ին 7 շինարարության թույլտվություններ և 2010թ-ին մեկ շինարարության քանդման թույլտվություն որոնց տրամադրումը կատարվել է ՀՀ կառավարության 02.02.2002թ **N91** որոշման պահանջներին համապատասխան:

5)Ավարտված շինարարության շահագործման փաստագրման սահմանված կարգով ձեւակերպում.

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին տրվել է 1; 2010թ-ին 3; 2011թ-ին 6 և 2012թ-ին 5 շինարարության ավարտը փաստագրող ակտեր, որոնցում բացակայում են կատարողական

փաստաթղթեր հանդիսացող (շինարարության վարման մատյան, ծածկած աշխատանքների ակտերը): Ավարտական ակտերի վերաբերյալ մարզպետարան իրազեկումը կատարվել է գործող կարգին համաձայն:

6) ինքնակամ շինարարության կանխարգելում ու կասեցում եւ օրենքով սահմանված կարգով դրանց հետեւանքների վերացման ապահովում:

Համայնքում շրջայցի ժամանակ շինարարական աշխատանքներ չեին ընթանում, սակայն 2012թ-ին անօրինական շինություն իրականացնելու համար համայնքի ղեկավարի կողմից երկու հարյուր հազարական դրամով տուգանվել են չորս կառուցապատողներ:

7) Շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ սահմանված կարգով վերահսկողության իրականացում:

Շենքերի և շինությունների նպատակային օգտագործման փոփոխություններ չեն եղել:

8) Համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառման իրականացում եւ բաշխում, սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի կազմում և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում:

Իրականացվել է համայնքային սեփականություն համարվող շենքերի և շինությունների հաշվառումը և բաշխումը կազմվել է համապատասխան փաստաթղթեր և տրվել է ավագանու հաստատմանը:

9) Համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության տրամադրում:

Մայակովսկի համայնքում գովազդի տեղադրման որոշումներ չեն կայացվել:

10) Համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրնուղի, կոյուղու, ռոտման ու ջեռուցման ցանցերի եւ այլ կառուցվածքների շահագործման կազմակերպում եւ կառավարում:

Ներհամայնքային հաղորդակցության ուղիների շահագործումն իրականացնում են մատակարարող կազմակերպությունները որոնք համայնքային ենթակայության չեն:

11) Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերի համայնքի ավագանու հաստատմանն ներկայացում:

Համայնքի կողմից բազմաբնակարան բնակելի շենքերի պահպանում չի իրականացվում:

2.3 Հողօգտագործման բնագավառ

1/ Քաղաքային և գյուղական համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների և գլխավոր հատակագծերի կառավարության սահմանած կարգով կազմում:

- Համայնքի ղեկավարը 2010թ. պատվիրել է համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեման, սակայն մինչև օրս սխեման իր ավարտին չի հասցվել նախագծող <<Մեծ Մարենի>> կազմակերպության կողմից:

2/ Համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներին, գոտիավորման այլ փաստաթղթերին, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանված պայմաններով, համայնքային սեփականության հողերը սահմանված կարգով օտարում կամ օգտագործման տրամադրում :

- Ստուգման ժամանակահատվածում Մայակովսկի համայնքի ղեկավարի կողմից կայացվել է համայնքային սեփականության հողամասերի օտարման 8 /ութ/ աճուրդ-վաճառք, օտարվել է 2,43 հա համայնքային սեփականության հողամաս, որից որից 1,43 հա բնակավայրի կատեգորիա, տնամերձ՝ 15 հողակտոր, 1,0 հա գյուղ. նշանակության, համայնքի բյուջե է մուտքագրվել 30 մլն. դրամ, աճուրդ վաճառքները տեղի են ունեցել ՀՀ հողային օրենսդրության պահանջներին համապատասխան: Ստուգման ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կայացվել է համայնքային հողերի վարձակալությամբ տրամադրելու 1/մեկ/ մրցույթ, որը տեղի է ունեցել 18 սեպտեմբերի 2012թ. , վարձակալությամբ հատկացվել է 0,46 հա / կառուցապատման իրավունքով/ արդյունաբերության,

ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամաս: Վարձակալության մրցույթը տեղի է ունեցել ՀՀ Հողային օրենսդրության պահանջներով:

3/ Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողության իրականացում:

- Ստուգման ժամանակահատվածում համայնքում քաղաքացիներ Սամվել և Սերյոժա Գրիգորյանների կողմից իրենց սեփականության իրավունքով պատկանող ծածկագիր 135-032, 031-0,67 հա հողամասի վրա տնկվել էր նորատունկ այգի, նախկին սեփականության վկայականով հողամասը հանդիսանում է այգի:

4/ Ապօրինի հողօգտագործումների՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցում և վերացում:

- Մայակովսկի համայնքում ապօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:

5/ Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման սահմանված կարգով իրականացում և համայնքի հողային հաշվեկշռի կազմում:

- Մայակովսկի համայնքում սահմանված կարգով վարվում էր հողամասերի ընթացիկ հաշվառումը և 2012թ. օրենքի պահանջներին համապատասխան մարզպետարան էր ներկայացվել համայնքի հողային հաշվեկշիռը:

6/ Համայնքի տարածքում գտնվող գեոդեզիական կետերը և համայնքի սահմանանիշերի պահպանության ապահովում:

- Համայնքի վարչական տարածքի գեոդեզիական կետերը հաշվառվել են և պահպանվում են օրենքի սահմաններում:

2.4 Տրանսպորտի քննադատ.

1) Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթուղիների կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման եւ շահագործման կազմակերպում.

- Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթուղիների կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման աշխատանքներից՝ կատարվել են միայն համայնքային ենթակայության ճանապարհների նորոգման և բարեկարգման մասնակի աշխատանքներ:

2) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների եւ կազմակերպությունների գործունեության կազմակերպում եւ կառավարում.

-Համայնքում՝ համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկներ և կազմակերպություններ չեն գործում:

3) Իրավասու մարմինների ներկայացմամբ համայնքի տարածքում ճանապարհային երթուղիների նշանների տեղակայման ու հանման հաստատում եւ թույլատրում:

-Համայնքի տարածքում ճանապարհային երթուղիների նշանների տեղակայումն ու հանումը հաստատելու և թույլատրելու մասին համայնքի ղեկավարը որոշումներ չի ընդունել: Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իրավասու մարմինների ներկայացմամբ համայնքի ղեկավարը հաստատում և թույլատրում է համայնքի տարածքում ճանապարհային երթուղիների նշանների տեղակայումն ու հանումը: Երթուղիների այն նշանները, որոնց տեղադրումը համաձայնեցված չէ համայնքի ղեկավարի հետ, իրավական ուժ չունեն:

2.5 Առևտրի և ծառայությունների քննադատ.

1) Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում առևտրի, հանրային սննդի եւ կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության իրականացում.

-Համաձայն մարզպետարան ներկայացված հաշվետվությունների առևտրի օբյեկտների հսկողություններ ստուգվող ժամանակաշրջանում իրականացվել են, խախտումներ չեն արձանագրվել: Հսկողության փաստաթղթերում կան թերություններ և բացթողումներ: /<<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենք 17-րդ և 171-րդ հոդվածներ /մաս 10/ /:

2) Ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով թույլտվության տրամադրում:

-Առևտրի օբյեկտներում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվությունները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 19.07.2007թ-ի N 843-Ն որոշման պահանջներին:

3) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության տրամադրում.

- Բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություններ չեն տրամադրվել:

4) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի եւ վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով թույլտվության տրամադրում:

-Համայնքի տարածքում տրվել է ժամը 24.00-ից հետո աշխատող մեկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտի համապատասխան թույլտվություն՝ համայնքի ղեկավարի 07.08.2012թ. թիվ 81 որոշումով:

5) համայնքի տարածքում «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառքի թույլտվության տրամադրում.

- Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության տրամադրման մասին որոշումներ ստուգվող ժամանակահատվածում չեն ընդունվել:

Այլ քննազավատներ

1) Ավագանու կանոնակարգով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ավագանու նիստերի հրավիրում եւ վարում.

- 2009թ. /ստուգվող ժամանակահատվածում/ գումարվել է ավագանու 6 նիստ, որից 5-ը՝ արտահերթ, 2010թ.՝ 10 նիստ, որից 4-ը՝ արտահերթ, ընդունվել է 44 որոշում, 2011թ.՝ 14 նիստ, որից 8-ը՝ արտահերթ, ընդունվել է 47 որոշում, 2012թ./մինչև ստուգումը/ 13 նիստ, որից 8 -ը՝ արտահերթ, ընդունվել է 48 որոշում:

-Ավագանու կանոնակարգում /ընդ. 25.11.2008թ. թիվ 1/1 որոշում/, ավագանու 22.10.2009թ. թիվ 22 որոշմամբ կատարվել է լրացում՝ սահմանվել է ավագանու հերթական նիստերի գումարման օրեր:

- Ավագանու նիստերին ներկայացած և քվեարկությանը մասնակցած ավագանու անդամների գրանցումներ կատարվել են սահմանված կարգով:

- Ավագանու նիստերի արձանագրումները կատարվում են մատյաններում: ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի նիստի N 39 արձանագրային որոշմամբ հաստատված՝ ՏԻՄ-երի կողմից ընդունվող փաստաթղթերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույցը գյուղապետարանին տրամադրելուց հետո՝ արձանագրությունները համապատասխանեցվել են մեթոդական ուղեցույցի 7-րդ կետի պահանջներին:

- Ստուգվող ժամանակահատվածի ավագանու նիստերի որոշումները հիմնականում մարզպետարան են առաքվել օրենքով սահմանված ժամկետում, բացառությամբ 3 նիստերի որոշումների՝ ուշացրել են 3-4 օր: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք 30-րդ հոդված, 3-րդ մաս, 8-րդ կետ:/

- Ավագանու նիստերի մասին և օրակարգերի հրապարակումները իրականացվում են 4 տեղ /1-ը՝ համայնքապետարանում/, այն համապատասխանում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 121-րդ հոդվածի պահանջներին: /Համայնքի քննչության թիվը կազմում է մոտ 2370 մարդ:/

- Սահմանված կարգով վարվում են ավագանու որոշումների հաշվառման մատյաններ, 2009թ. հաշվառվել է 39 որոշում, 2010թ.՝ 44 որոշում, 2011թ.՝ 47 որոշում, 2012թ.՝ /մինչև ստուգումը/ 48 որոշում: /ՀՀ կառավարության 11 հուլիսի 2002թ. թիվ 1146-Ն որոշում /հավելված թիվ 2/:

2) Համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքի ավագանու անդամներին ուղարկում եւ համայնքի ավագանու նստավայրում բոլորի համար տեսանելի տեղում փակցնում.

+ Համայնքի ղեկավարը անհատական իրավական ակտեր ընդունելուց հետո երկօրյա ժամկետում ուղարկում է համայնքի ավագանուն, որոնք փակցվում են համայնքի ավագանու նստավայրում, բոլորի համար տեսանելի վայրում: Ուսումնասիրվող ժամանակահատվածում փակցված էր թվով 4 անհատական իրավական ակտեր:

3) Համայնքի զարգացման քառամյա ծրագրի՝ ավագանու հաստատմանը ներկայացում.

- Համայնքի ղեկավարը համայնքի 209-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը ավագանու հաստատմանն է ներկայացրել 19.03.2009թ.՝ օրենքով սահմանված վերջնաժամկետից 37 օր ուշացումով: Խախտվել է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք 53-րդ հոդվածի, 1-ին մասի պահանջը: /Համայնքի ղեկավարը ընտրվել է 12.10.2008թ., լիազորությունները ստանձնել է 11.11.2008թ./

4) աշխատակազմի (այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների), ինչպես նաև բյուջետային հիմնարկների եւ ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների հաստատում.

-Գյուղապետարանի աշխատակազմի նոր /օրենսդրությամբ սահմանված համապատասխան փոփոխություններով և լրացումներով/ կանոնադրությունը հաստատվել է համայնքի ղեկավարի 20.02.2011թ. թիվ 40 որոշումով, առանձնացված ստորաբաժանում չունեն: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդված, 1-ին մաս, 4-րդ կետ/:

5)Աշխատակազմի եւ բյուջետային հիմնարկների կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերի եւ դրանցում առաջարկվող փոփոխությունների՝ ավագանու հաստատմանը ներկայացում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված դեպքում:

+ Համայնքի ավագանու որոշմամբ հաստատվել է աշխատակազմի հաստիքացուցակը և աշխատակիցների թվաքանակը: Կառուցվածքի վերաբերյալ որոշման նախագծեր չեն ներկայացվել, քանի որ գյուղապետարանի աշխատակազմը կառուցվածքային ստորաբաժանումներ չունեն:

6)Աշխատակազմի եւ բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի եւ պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերի եւ դրանցում առաջարկվող փոփոխությունների ավագանու հաստատմանը ներկայացում.

-Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանված կարգով հաստատվել են ավագանու համապատասխան որոշումներով /տես՝ վարչ. հսկ. կետ 17/:

7)Համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների եւ ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագծի՝ ավագանու հաստատմանը ներկայացում.

-+Համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշումներ չեն կայացվել նման գործընթաց չլինելու պատճառով:

-/Համայնքի մանկապարտեզը վերակազմավորվել է համայնքային ոչ առևտրային կազմակերպության դեռևս 30.01.2006թ.: Համայնքում ուրիշ համայնքային հիմնարկներ և կազմակերպություններ չկան /տես՝ վ. հ. կետ 10/:

8) համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների խորհուրդների եւ վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերի՝ ավագանու հաստատմանը ներկայացում.

+ Համայնքային ենթակայության առևտրային կազմակերպություններ համայնքում չեն գործում:

9) Համայնքի ղեկավարի տեղակալի, աշխատակազմի քարտուղարի, կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում եւ ազատում.

+ Ուսումնասիրվող ժամանակահատվածում համայնքի ղեկավարի տեղակալ չի նշանակվել և չի ազատվել, ինչ վերաբերվում է առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, ապա այդպիսիք չկան, քանի որ աշխատակազմը նման ստորաբաժանումներ չունի:

10) Համայնքի բյուջետային հիմնարկների ղեկավարների՝ համայնքի ավագանու որոշմամբ նշանակում եւ ազատում:

- Ստուգվող ժամանակահատվածում՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուների նշանակումների և ազատումների մասին, որոշումներ չեն կայացվել /տես՝ վ.հ. կետ 11/:

11) Տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման նախագծի համայնքի ավագանու հաստատմանը ներկայացում.

+ Համայնքում տեղական հանրաքվե չի նշանակվել, հետևաբար նման որոշման նախագիծ համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել:

12) Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրերի կնքում, համայնքի ավագանու վավերացմանը դրանց ներկայացում: Միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու եւ դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծերի՝ ավագանու հաստատմանը ներկայացում:

+ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրեր չեն կնքվել, միջհամայնքային միավորումներ չեն ստեղծվել, ինչպես նաև համայնքների հիմնադրած միությունների անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծեր ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:

13) Համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին առաջարկության ներկայացում:

***Համայնքի ավագանուն՝ ղեկավարի կողմից ներկայացվել է 5 / հինգ/ առաջարկություն, հողամասերը օտարելու և վարձակալական վերաբերյալ:

Առաջարկել Մայակովսկի համայնքի ղեկավարին՝ 2012թ. միջոցներ ձեռնարկել համայնքի գոտիավորման սխեմայի նախագծման աշխատանքները ավարտին հասցնելու վերաբերյալ:

14) Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանու հաստատմանը առաջարկի ներկայացում:

+ Համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝ քաղաքացի Արամ Խաչատրյանին, ավագանու 08.10.2012թ. թիվ 47 որոշմամբ, շնորհվել է Մայակովսկի համայնքի պատվավոր քաղաքացու կոչում: /ՏԻՄ հ. 32, մաս 1, կետ 14/:

15) Համայնքի անվանման եւ վերանվանման ենթակա փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային եւ այլ հիմնարկները եւ կազմակերպությունները համայնքի ավագանու հաստատմանն ներկայացում եւ օրենքով սահմանված կարգով գրանցման ներկայացում (բացառությամբ պատմամշակութային ու բնապատմական հուշարձանների):

-Ստուգվող ժամանակահատվածում նման առաջարկություններ ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:

16) Շենքերի եւ շինությունների համարակալման սահմանում:

** ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքում 2007թ-ին շենքերը, շինությունները համարակալվել են տրվել են հասցեներ, որը հաստատվել է 05.11.2007թ-ի ավագանու թիվ 09/2 որոշմամբ:

17) Իր իրավասության շրջանակում որոշումների ընդունում, արձանագրությունների կազմում եւ կարգադրությունների արձակում:

+ Ուսումնասիրվող ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կայացվել են՝ 2009թ. 58, 2010թ.՝70, 2011թ.՝ 48, 2012թ.՝ 37 կարգադրություններ, 47, 56, 66, 104 որոշումներ: Աշխատակազմի քարտուղարի կողմից տրվել է համապատասխանաբար 11,15,19,16 հրամաններ:

Համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերում արձանագրվել են մի շարք խախտումներ, թերություններ և բացթողումներ:

02.02.2010թ. N 15 կարգադրության մեջ ճիշտ չի գրառվել օրենքի կրճատ անվանումը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի «Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության օրենք» բառերը»: Նույնը կրկնվել է 2010թ. N34, 37, 46, 52, 56,70, 2011թ. N14,24,36,43, 2012թ. N8, 22, 25, 31, 34 կարգադրություններում, 2010թ. N 21, 26,48 ,2011թ. N 50 որոշումներում,2010թ. N 3-6 հրամաններում:

01.04.2010թ. N25 կարգադրության մեջ չի պահպանվել օրենքի հոդվածի «մաս», «կետ» հարաբերակցությունը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի «Օրենքի

հողվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների, մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի»: Նույնը կրկնվել է 2010թ. N 64, 2011թ. N 23, 37 կարգադրություններում, 2009թ. N 39, 2010թ. N 10,11,21,23,41, 2011թ. N2,12,15,18,44,45, 2012թ. N 8,20,21,23,78,103 որոշումներում,2010թ. N10 հրամանում:

03.05.2010թ. N 18 որոշման մեջ սխալ է գրառվել օրենսգրքի կրճատ անվանումը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի «Օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են «Հայաստանի Հանրապետություն» բառերը և օրենսգրքի վերնագիրը»: Նույնը կրկնվել է 2009թ. N6 հրամանում:

18.06.2010թ. N26 որոշման մեջ սխալ է գրառվել իրավական այլ ակտերի կետերի համարակալումը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, համաձայն որի «Իրավական այլ ակտերում կետերը և ենթակետերը համարակալվում են արաբական թվանշաններով, իսկ պարբերությունները հայերենի այբուբենի փոքրատառերով»: Նույնը կրկնվել է 2011թ. N50, 2012թ. N 50,69,70,83 որոշումներում, քարտուղարի 2012թ. N18 հրամանում:

11.03.2010թ. N 19 կարգադրության մեջ սխալ է գրառվել իրավական ակտի ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը, համաձայն որի «Իրավական ակտերում կիրառվող ամսաթվերում տարեթիվը և ամսաթիվը գրվում են թվերով, իսկ ամիսը տառերով»: Նույնը կրկնվել է 2010թ. N32,51,53,66,68, 2011թ. N 21,22,25,39,40,41,44,46, 2012թ. N13,33,36 կարգադրություններում, 2011թ. N4, 8, 9, 23,25,26,37 որոշումների մեջ:

28.12.2009թ. N57 կարգադրության մեջ սխալ է գրվել իրավական այլ ակտերի կրճատ անվանումը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի, «Իրավական այլ ակտերի կրճատ անվանումը հիշատակելիս, դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են իրավական ակտն ընդունող մարմնի անվանումը, իրավական ակտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը և տեսակը»: Նույնը կրկնվել է 2010թ. N51, 2011թ. N 21,22,25 կարգադրություններում, 2010թ. N 28,32 որոշումների մեջ, աշխատակազմի քարտուղարի 2010թ. N 2 հրամանում:

18) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով ինքնուրույն եւ սեփական պատասխանատվությամբ պետության պատվիրակած լիազորությունների իրականացման կազմակերպում եւ ղեկավարում.

+ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, պետության պատվիրակված լիազորությունների իրականացման հետ կապված, համայնքում կազմակերպվել է անասնաբույժի մեկ միավոր հաստիքի աշխատանքների իրականացում:

20) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական եւ այլ կադաստրների վարում.

****Քաղաքաշինական կադաստր համայնքը չի վարում:**

21) Օրենքով կամ կառավարության սահմանած կարգով քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային եւ կարանտինային միջոցառումների, ինչպես նաեւ տեխնոլոգիական եւ տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետեւանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար միջոցների ձեռնարկում.

-Քաղաքացիական պաշտպանության 2012թ. պլանը մշակվել է օրինակելի ձևին համապատասխան, հաստատվել է համայնքի ղեկավարի 27.04.2012թ. թիվ 44 որոշմամբ:

22) Համայնքի բնակիչների հաշվառման կազմակերպում.

- Կազմակերպվել է համայնքի բնակիչների հաշվառում. 2009թ.՝ 2272 մարդ, 2010թ.՝ 2308 մարդ, 2011թ.՝ 2342 մարդ, 2012թ.՝ 2370 մարդ: /ՏԻՄ ՀՀ օրենք, հ. 33, մ 1, կետ 2/:

23) համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաեւ դատարանում ներկայացում.

+ Համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում պաշտպանելու անհրաժեշտություն չի եղել:

24) 3000-ից ավել բնակիչ ունեցող համայնքներում քաղաքացիների ընդունելության կատարում, օրենքով սահմանված կարգով քաղաքացիների առաջարկությունների, դիմումների եւ բողոքների քննության առում եւ միջոցների ձեռնարկում.

- Համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը սահմանված են, գրանցումների մատյանը վարվում է:

+Գյուղապետարանում վարվում են դիմումների և գրությունների մուտքի, գրությունների ելքի մատյաններ: 2009 թ. գյուղապետարանի աշխատակազմում մուտք են եղել 146, 2010 թ.' 144, 2011 թ.' 127, 2012 թ.' 146 դիմումներ: 2009 թ. մուտք են եղել 72, 2010 թ.' 68, 2011 թ.' 83, 2012 թ.' 51 գրություններ, համապատասխանաբար ելք են եղել 245, 193, 235, 183 գրություններ: Մուտք եղած բոլոր դիմումներն ու գրությունները սահմանված կարգով գրանցված են դիմումների մուտքի և գրությունների մուտքի մատյաններում, իսկ ելք եղած գրությունները՝ գրությունների ելքի մատյաններում, որոնք սահմանված կարգով էջակալված, թելակարված և կնքված են, իսկ գրանցումներից երևում է ամբողջ շարժը:

25)Խնամակալության, հոգաբարձության սահմանում, խնամակալության եւ հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորությունների իրականացում.

+ Համայնքի ավագանու 07.09.2009թ. N 12 որոշմամբ ստեղծվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով՝ 3 անդամից բաղկացած: 11.04.2011թ. N որոշմամբ ստեղծվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով՝ 7 անդամից բաղկացած, նույն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել 07.09.2009թ. N 12 որոշումը: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը նիստ չի գումարել հարցեր չլինելու պատճառով:

26) իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու եւ այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում, օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն.

+ Համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքեր չեն արձանագրվել, հետևաբար ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն չի տրվել:

27) օրենքով սահմանված կարգով համայնքի զինապարտների գրանցամատյանի վարում, նրանց վերաբերյալ ցուցակների, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու եւ աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալների ներկայացում տարածքային զինվորական կոմիսարիատ.

-Համայնքի զինապարտների հաշվառման գրանցամատյանը վարվում է էլեկտրոնային տարբերակով:

ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրության հաստատում օրենքով սահմանված կարգով:

-Գյուղապետարանի աշխատակազմի նոր /օրենսդրությամբ սահմանված համապատասխան փոփոխություններով և լրացումներով/ կանոնադրությունը հաստատվել է համայնքի ղեկավարի 20.02.2011թ. թիվ 40 որոշումով: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդված, 1-ին մաս, 4-րդ կետ/:

2Համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման մատյանների վարում, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

-Համայնքի ղեկավարի, ավագանու և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման մատյանները վարվում են համաձայն սահմանված կարգի:

3.Կադրային գործի վարման նկատմամբ վերահսկման շրջանակներում ուսումնասիրության ենթարկված բոլոր իրավական ակտերի համադրում իրավական ակտերի հաշվառման մատյանների գրառումների հետ:

- Համայնքի ղեկավարի, ավագանու և աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերը համապատասխանում են իրավական ակտերի հաշվառման մատյանների գրառումների հետ:

4.Օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքի հաստատում (կառուցվածքը անհրաժեշտ է հաստատել, եթե աշխատակազմն ունի ստորաբաժանում (բաժին)):

- Գյուղապետարանի աշխատակազմը ստորաբաժանում չունի (բաժին):

5.Համայնքային ծառայության պաշտոնների մասով հաստիքացուցակի համապատասխանությունը համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին, ինչպես նաև պաշտոնային դրույքաչափերի համապատասխանությունը «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի ու «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

-Գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանված կարգով հաստատվել են ավագանու համապատասխան որոշումներով /տես՝ վ.հ. կետ 17/:

Համայնքային ծառայության պաշտոնների մասով հաստիքացուցակը համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանով հաստատված՝ Մայակովսկի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին /N 36 հավելված/: Համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի ու «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

6.Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատման (փոփոխման) ընթացքը, այդ թվում՝ անվանացանկից հանված պաշտոնների անձնագրերը ուժը կորցրած ճանաչելն ու անվանացանկում ավելացված նոր պաշտոնների անձնագրերի հաստատումը, ինչպես նաև վերջնական պաշտոնների անձնագրերի բովանդակության համադրումը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջների հետ:

-Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատվել են համայնքի ղեկավարի 24.01.2007թ. թիվ 01 որոշումով:

-Համայնքի ղեկավարի 18.02.2009թ. թիվ 05, 01.04.2010թ. թիվ 01, 04.03.2011թ. թիվ 12, 20.04.2011թ. թիվ 18 որոշումներով կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ գլխավոր և կրտսեր պաշտոնների անձնագրերում օրենսդրության պահանջներին համապատասխան, կապված նաև համայնքային ծառայության, պաշտպանության բնագավառի՝ զինապարտների հաշվառման մատյանի վարման, խնամակալության և հոգաբարձության հետ:

-Համայնքի ղեկավարի 23.03.2012թ. թիվ 21 որոշմամբ, համաձայն հավելվածների, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում կատարվել են ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի մարտի 16-ի N 43-Ա հրամանից բխող փոփոխությունները: Վերջնական պաշտոնների անձնագրերի բովանդակությունները հիմնականում համապատասխանում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին:

7.Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգով համայնքային ծառայողների անձնական գործերի վարում:

-Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը հիմնականում համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով սահմանված՝ համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին: Արձանագրված հիմնական թերությունները և բացթողումներն են.

-անձնական թերթիկներն ու ինքնակենսագրությունները չեն համապատասխանում կարգի 7-րդ կետի <<դ>> և <<զ>> ենթակետերի պահանջներին, բացակայում են՝ լրացված չեն, նոր անձնական թերթիկները,

-բացակայում են ատեստավորված համայնքային ծառայողների ծառայողական բնութագրերը;

- կան թերություններ վերգիրների լրացման մեջ,

-որոշ փաստաթղթերը չեն պահվում ժամանակագրական կարգով, կան ավելորդ փաստաթղթեր և այլը:

8. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգով համայնքի ղեկավարի կողմից համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմի հաստատում, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից հանձնաժողովի կազմում ընդգրկվող համայնքի ավագանու անդամների քանակական և անհատական կազմի հաստատում ու 20-օրյա ժամկետում՝ հանձնաժողովի աշխատակարգային նիստի հրավիրում և հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրություն (հանձնաժողովի աշխատակարգային նիստի արձանագրություն)։

- Ավագանու 22.10.2009թ. թիվ 21 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկված ավագանու անդամների քանակային և անհատական կազմերը /3 անդամ/։

- Մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նախագահը /համայնքի ղեկավարը/ 23.10.2009թ. թիվ 36 որոշմամբ /փոփ. 20.09.2011թ. թիվ 39 որոշմամբ/ հաստատել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը։ Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգային նիստ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրության, կայացել են 27.10.2009թ. և 20.09.2011թ, այստեղ կան անհամապատասխանություններ համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերի պահանջին, այն կարգավորվում է նշված աշխատակարգերի 3-5 կետերով։

9. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերի հաստատում։

- Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարը 25.10.2011թ. թիվ 50 որոշումով։

10. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգի հաստատում և դրա պատշաճ իրագրելում՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի բոլոր աշխատակիցներին։

- Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա համայնքի ղեկավարը 24.10.2011թ. թիվ 35 կարգադրությամբ հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը։ Կանոնակարգը պատշաճ իրագրվել է աշխատակազմի աշխատակիցներին։

11. Օրենքով սահմանված կարգով մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված մատյանի, վերապատրաստման հաշվառման մատյանի, ինչպես նաև անձնական գործերի հաշվառման մատյանի վարում։

- Համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվում են համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գրանցամատյանները։ Մատյանները համարակալված, թելակարված և կնքված են։

12. Համայնքային ծառայության պաշտոնները զբաղեցնողների (մրցույթի արդյունքներով նշանակված կամ ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող) կրթության, համապատասխան ստաժի և այլ տվյալների համադրումը համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջների հետ։

- Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները զբաղեցնողների, ինչպես նաև մրցույթի արդյունքներով նշանակվածների կրթությունը, ստաժը և այլ տվյալները համապատասխանում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին։

13. Համայնքներից Հայաստանի Հանրապետության մարզպետարան ներկայացված գրանցամատյանային տվյալների (Ձև NN 1, 2) արժանահավատության փաստացի ուսումնասիրություն։

- Աշխատակազմի համայնքային ծառայողների գրանցամատյանում (Ձև N 1) տվյալները հիմնականում համապատասխանում են մարզպետարան ներկայացված տվյալներին։

14. Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների փաթեթների ուսումնասիրություն.









- Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների փաթեթների ուսումնասիրությունից պարզվեց, որ մրցույթները և ատեստավորումները հիմնականում անցկացվել են սահմանված կարգերին համապատասխան:

15. Զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանի վարում.

- Համայնքի զինապարտների հաշվառման գրանցամատյանները վարվում են, /տես՝ այլ քննագ. կետ 27/:

16. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից հայտնաբերված թերությունների մասին զեկուցագրերի համադրում թերությունները վերացած լինելու մասին համայնքների ղեկավարների ներկայացրած տեղեկատվության և փաստացի իրավիճակի հետ:

- Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում կազմված զեկուցագրերում նշված թերությունները կարգավորվել են:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ	
ՂԵԿԱՎԱՐ՝	 Ս. ՀԱԿՈՒԲՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝	 Ռ. ՌՈՒՄՈՅԱՆ
	 Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
	 Ս. ԲԱԴԿԱՍԱՐՅԱՆ
	 Տ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
	 Ա. ՎԻՐԱԲՅԱՆ
ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ	
<i>Օւտերաքացա ախգրն, արքացա ախգր յեջ քիւսակ քաջաբարբաթութեան և առաքիւսաթուճեան շունծէ.</i>	
 / ստորագրություն /	 / նստն, ազգանուն /
20 12 2012 թ.	